ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 114

10. դեկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 27-ին կայացած թիվ 9 նիստի որոշումները:

Առդիր՝ 8 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.23/13226-15
10 12 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

27.նոյեմբերի 2015 թ. N 9 նիստի

N 31 որոշում

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12 –րդ հոդվածի 4-րդ մասով.

Որոշում է

1. Հաստատել Հայկական համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ս. Գևորգյան			
Ա. Մանուկյան			
Ս. Սարգսյան			
Լ. Եպիսկոպոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հայկավանի
գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի նոյեմբերի 27-ի
N 9 նիստի N 31 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայկավան համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին:	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար
2. Գույքահարկի զիջման մասին	Ա. Մանուկյան ավագանու անդամ
3.2016թվականի տեղական տուրքերի և վճարների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար
4.Հայկավան համայնքի ղեկավար Ռ. Ղազարյանին խրախուսանքի ենթարկելու մասին	Ա. Հովհաննիսյան ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

27.նոյեմբերի 2015թ. N 9 նիստի

N 32 որոշում

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Գույքահարկի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15 –րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Կարեն Հովհաննիսյանի դիմումը

Որոշում է

1. Հայկական համայնքի բնակիչ՝ Կարեն Հովհաննիսյանին պատկանող ՎԱԶ 21102 մակնիշի ավտոմեքենայի գույքահարկից զիջել 7700 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ս. Գևորգյան			
Ա. Մանուկյան			
Ս. Սարգսյան			
Լ. Եպիսկոպոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

27.11.2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 9 նիստի
N 33 -Ն որոշում

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով հրապարակման հաջորդող 10 –րդ օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ս. Գևորգյան			
Ա. Մանուկյան			
Ս. Սարգսյան			
Լ. Եպիսկոպոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 33-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հիգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար«Տեղական տուրքերի եկճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի եկճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ:

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ:

4) ծխախոտի արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ:

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար մեկ հազար դրամ:

12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Հայկավան համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ընտանիքի համար խմելու ջրի վարձ սահմանել յուրաքանչյուր ամիս մեկ հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

27.նոյեմբերի 2015թ. N 9 նիստի

N 34 որոշում

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով.

Որոշում է

1. Հայկական համայնքի ղեկավար Ռուբեն Ղազարյանին երթարկել խրախուսանքի՝ միանվագ դրամական պարգևատրում 240.0 հազար դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ դեմ ձեռնպահ

Ս. Գևորգյան ----------

Ա. Մանուկյան ----------

Ս. Սարգսյան ----------

Լ. Եպիսկոպոսյան ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ